# ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 15-ին, հինգշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի 1966—67 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը։

Հանդիսությանը նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով։ Ապա՝ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» թարգմանչաց երգը։ Այնուհետև՝ Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժ. Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ընթերցում է «Սերմնացանի առակ»-ը։

Հոգևոր Ճեմարանի տեսուչ Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հանդեսի բացումը կատարում է ոգևորիչ և խանդավառ ճառով՝ շեշտելով Հոգևոր Ճեմարանի գերը մեր օրերում ևս հայ եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի հոգևոր, հայրենասիրական դաստիարակության շնորհակալ գործում։ Տեսուչ Հայր Սուրբը կոչ է անում ուսանողությանը՝ այս տարի ևս աշխատել է՛լ ավելի արդյունավետ կերպով գիտություն ամբարել մեղուների փութաջանությամբ և պատրաստվել գալիք օրերի ծառայության սուրբ գործին, որին անհամբեր սպասում են մեր եկեղեցին և մեր ժողովուրդը։ Հայր Սուրբն իր խոսքը վերջացնում է այն սրտագին բարեմաղթությամբ, որ այս տարի էլ Հոգևոր Ճեմարանի նվիրական կամարների տակ, ձեռք-ձեռքի տված՝ տեսուչ, դասախոս և ուսանողություն, հավատքով, սիրով՝ աշխատեն միակամ՝ մեծ տեսիլքի ճանապարհի վրա։

Իր բացման խոսքի վերջում տեսուչ Հայր Սուրբը հայցում է Աստուծո օգնականությունը և Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ կրթական այս հարկի բոլոր մշակների, աշխատավորների և ուսանողության վրա։

Ճեմարանի երգչախումբը խանդավառորեն կատարում է «Աշակերտը Քրիստոսի» շարականը։

Այնուհետև՝ ընդհանուր լռության մեջ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ տալու հայրական իր խրատներն ու օրհնությունները՝ տեսչության, դասախոսական կազմին և աշակերտության։

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

Ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

Սեպտեմբերի 15-ին, ուրախ ու տոնական հնչում է Ճեմարանի հարկի տակ, 1966—67 ուսումնական նոր տարվա առաջին զանգը։

Ավելի ուշ՝ Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում ընդունել դասախոսական կազմին, շնորհավորում ուսումնական նոր տարին, օրհնում նրանց աշխատանքը՝ անելով նաև մի շարք թելադրություններ՝ Ճեմարանում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների է՛լ ավելի արդյունավետության համար։

Այս տարի Ճեմարանում սովորում է 31 ուսանող՝ բաժանված հինգ դասարանների վրա. 1-ին՝ Ա, Բ, Գ դասարանական բաժիններում և 2-րդ՝ Ա, Բ լսարաններում։

Ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է նոր ուժերով։ Ճեմարանի նախկին վերատեսուչ գեր. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը ևս սիրով ստանձնել է մի շարք կրոնական մասնագիտական կարևոր առարկաների դասավանդումը Հոգևոր Ճեմարանում։